

1843 ԲՍՉՄԱՎԷՊ 1910

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն

ՀԱՏՈՐ  
ՎԷ  
ՅՈՒԼԻՍ  
թ. 7

ԱԶԳԱՅԻՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԳԱՏԿԵՐԱԶԱՐԻ  
ԱՄՍՈՒԲԵՐԹ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ճ Ե Մ Ա Ր Ա Ն

### ՀՆԱԽՕՍԱԿԱՆ

ՀԱՅ ԵՒ ՕՏԱՐ ԵՐԳՄՈՒՆԻՔ

Արեգական տակ նոր բան չկայ, ըսած է Հրէից իմաստունը: Մարդը, որ զամիտ մարդը, սկսեալ իւր ընկած վիճակէն մինչև ըզգաքակրթութեան բարձրագոյն աստիճանին վրայ, ունեցած է միշտ մի և նոյն հիմնական սկզբունքները, մի և նոյն կրօնական ընդարոյս զգացումները, և առնոց արտայայտութեան զխաւոր ձեւերն ալ փոքր ի շատէ նոյն եղած են ամէն ժամանակ և ամէն ցեղերու մէջ: Քաղաքակրթութիւնը նրբացուց, և ըրիստոնէութիւնն ազնուացուց ու կատարելագործեց զանոնք:

Նոյնը կը տեսնենք և երդման սովորութեանց մէջ: Ինչ որ տոհմային բարուց քննութիւնը մեր առջեւ դրաւ ցարդ, մեր լոկ սեպհականութիւնը չէին, այլ մեծագոյն մասամբ կային հանուր մարդկութեան մէջ ալ, որոցմէ ժառանգած էին մեր նախնիք: Այդ ժառանգման մէջ իրենց բաժինն ունեցած են ներքին քնազոյն ու միտքը:

ՅՈՒԼԻՍ. 1910

դրացի զօրաւոր ազգեր, հեթանոս ու ըրիստոնեայ կրօնները, Ս. Գիրքը, և տոհմային կենցաղավարութեան եղանակը: Այդ սահակաց իւրաքանչիւրին որոշ բաժինը սահմանել՝ դիւրին գործ չէ. և ոչ ալ՝ թէ արտացոյցն ուղղակի՞ թէ միջնորդաւ ներգործե՞ր են: Մանաւանդ որ մեր պատմութեան առաջին շրջանները շատ մթին են տակաւին, որոց լուսաւորութենէն կախուած է շատ խնդրոց լուծումը: Այս պարագային մէջ պիտի շատանամ երդմական ձեւոց համեմատութեամբ միայն, նիւթ առնելով որչափ ինչ ծանօթ է ինձ: Չպիտի ցուցնեմ օտարաց բոլոր սովորոյթները, ինչ որ կը հեռացնէր զիս զուգակռի ծրարէն. այլ զանոնց միայն՝ որ նմանութեամբ կամ միբձաւորութեամբ ազերս ունին մերոց հետ:

—\*—

Ա. — Երդումն: — Աշխատութեան սկիզբը (էջ 49) նկատեցինք աւետարանական արգելքը երդմանու, ինչպէս և Ս. Հարց ումանց խօսքերը, որոնք այդ պատուէրը կ'իմանային որ և է երդման դէմ, նոյն իսկ օրինաւորին: Արդոնց վրայ կա-

րող էի յաւելուլ ուրիշ շատերն ալ, սկը-  
սեալ երիցագոյններէն, ինչպէս Երանոս,  
Կղեմէս աղեքսանդրացի, Տերտուղիանոս,  
Հերոնիմոս և այլք, որոնք ըստ տառին  
կ'առնուին Յիսուսի արգելքը, որ հետե-  
ւեան է իւր ամբողջութեամբ: «Ասացաւ  
առաջնոցն, մի՛ երզնուցուս սուտ, բայց հա-  
տուացես Տեսնո գերզմունս քո: Այլ ես  
ասեմ ձեզ՝ ամենևին մի՛ երզնուլ, մի՛  
յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ, և մի՛  
յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա,  
և մի՛ յերուսաղէմ՝ զի քաղաք է մեծի  
արքայի. և մի՛ ի գուլիս քո երզնուցուս...  
Այլ եղիցի ձեր բան՝ այոն այո և ոչն ոչ,  
զի աւելին քան զայն ի չարէն է» (Մտթ.  
Ե, 33—37): Յակորոս առաքեալ նոյնը  
կրկնեց՝ ըսելով. «Եղբարք իմ, մի՛ երզ-  
նուցուք, մի՛ յերկինս, մի՛ յերկիր, մի՛  
յայլ ինչ երդումն. այլ եղիցի ձեր այոյն՝  
այո, և ոչն՝ ոչ» (Ե, 12): Բրիտանոնէու-  
թիւնը սակայն թէ այս աւետարանական  
պատուէրք և թէ Ս. Հարց խօսքերը մեկ-  
նել ուզէք սովորական խօսակցութեանց  
մէջ կատարուած երզմանց կամ երզմա-  
հարութեան դէմ՝, նկատելով որ օրինա-  
ւորը ներուած հին օրինաց մէջ, պատճառ  
մը չկար աններելի իմանալու նորին մէջ.  
և թէ Պաւղոս յիշելով Աստուծոյ երդումն  
առ Աբրահամ, և մարդոց ալ սովորու-  
թիւնը, չի պարսուեր զայն, որով կը  
հաստատէ (Եբբ. 2, 13—18): Եւ ինքն  
իսկ առաքեալն յաճախ երզման ձեւեր կը  
գործածէ, «վկայ» կոչելով զԱստուած  
(Հռովմ. Ա. 9, Բ կոր. Ա, 23. Փիլիպ. Կ,  
8):

Թէ արդեօք Աւետարանի արգելման և  
Հարց իմացման մէջ ստուգիւ լռելեայն  
զանազանութիւն կ'ա՞յ. արդեօք քրիստո-  
նէութիւնը տիրող սովորութենէն չհետեւ-  
ցո՞ց զայդ. կամ թէ Պաւղոսի երզմունքն  
ի զօրացումն իւր վարդապետութեան՝ կը  
յարմարին մեր պարագային, և կը մեկ-

նե՞ն ու կ'ամոքե՞ն միւս արգելիչ պատուի-  
րանները: Հարցումներ են՝ որոց հեշտ չէ  
պատասխանել. Եկեղեցին արդարեւ կրնար  
մեղմել ինչ ինչ աւետարանական օրէնք-  
ներ՝ որոնք վարդապետութեան ոգւոյն չէին  
Ֆրանսիոյ, առաջնորդելով հարկէն և ըն-  
կերութեան ընթացքէն: Բայց այսու պիտի  
չխափանէր զմեզ՝ խուզարկելու նոյն օ-  
րինաց նախկին միտքը: Այս տեսակիտիս  
մէջ շօշափելով ինդիբը, անտեղի չպիտի  
լինէր ամբողջ իմաստով առնուլ աւետա-  
րանական արգելքը, երբ նկատէինք՝ որ  
այդ գաղափարն ոչ լոկ փրկչական կամ  
առաքելական, այլ աւելի ընդարձակ էր  
և ծանօթ՝ Յիսուսի ոչ հաւատացեալ ժա-  
մանակակցաց եւ: Ասոցմէ էին Եսսե-  
նեան հրեայք, շատ մասամբ մերձաւոր  
քրիստոնէութեան, որոնք բացարձակապէս  
կ'արգելուին երզնուլ, բաց ի մէկ առթէ,  
որ է իրենց ազանդոյն անդամակցելու  
պահուն միայն (վիզուր. անդ). երդումն  
իրենց համար հակառակ էր առաքինու-  
թեան և նախատինք Աստուծոյ դէմ՝: Ա-  
ւելին կայ. հեթանոս իմաստասէրք ալ,  
որոնք ընական ողջմտութեամբ կը դա-  
տէին բարոյական խնդիրները, այս մասին  
կատարելապէս համաձայն էին Աւետարա-  
նին, Հարց ու Եսսենեանց: Պիթագոր կոռու-  
ցաւ երզմնելու սովորութեան դէմ, նոյն  
իսկ հարկաւոր գործոց մէջ. իւր աշա-  
կերտք լաւագոյն կը համարէին դատ մը  
կորուսանել՝ քան թէ շահիլ երզմամբ:  
Իրենց դպրոցին առածն էր՝ «Մի՛ երզ-  
նուր»: Մենանդը՝ աշակերտ Թէոփրաս-  
տի՝ նոյն գաղափարը կը յայտնէ. «Ար-  
գիլէ՛ երզնուլ բարի թէ չար դատերու հա-  
մար՝»:

Ուրեմն մեր Հարց չէին խարուեր, երբ  
աւետարանական արգելքը բացարձակ ի-  
մաստով կ'առնուին, և համամիտ կը հան-  
դիսանային նոյն պատուերին, ինչպէս տե-  
սանք (էջ 49—51):

1. Vigouroux, Dict. de la Bible. — Jurement.  
— Bergier, Dict. de Théo. II. 467. — Goschler,  
Dict. encycl. XXII, 12.

2. Goschler, VIII, 75.  
3. Daremberg, Dict. des Antiqu. — Jusjuran-  
dum, 769.

Բ. — Երդմնահարտրիւն: — Մէկ ծայրայեղութիւնէն յաւախ ուրիշ մը կը ծնանի: Երդման արգելքն հաւանօրէն պտուղն էր այն զեղծմանց՝ որոց ենթարկուած էր այդ նուիրական գործն առ հասարակ ամէն ազգաց մէջ, ինչպէս էր և մեր քով, թէև օտարներ չկարենային մրցիլ մեզի հետ, դատելով գոնէ մեր ունեցած վկայութիւններէն: Եւ եթէ ոմանց ուզեցին բոլորովին խափանել զայն, եղան ալ՝ որ փորձեցին չափ ու սահման դնել անոր, նման մեր Հարց պարսաւելով երդմնահարտրութիւնը:

Սինէական տասնարանեայ օրինաց մին էր՝ Աստուծոյ անունը չառնուլ «ի վերայ սնտոնաց» (ԵԼԲ, Ի, 7): Ո՛րքան զեղեցիկ պիտի լինէր՝ եթէ ամէն հրեայ պահէր այդ պատուօրհանը: Ընդ հակառակն ժողովոդն իւր օրով կը տեսնէր թէ զանցատուն և թէ պահողը: «որ երդնուն և որ յերմանէն երկուցեալ է» (Թ, 2): Աւելի երկարօրէն կը խօսի Սիրաքը, ըսելով. «Մի՛ ընտելացուցաներ զբերան ջր ընդ երզումն, և անուանակոչութեան Սրբոյն մի սովորիբ»: Գիտէ և անոր չար հետեւանները: «Որ երդնուցուն և անուանիցէ շանապազ՝ ի մեղաց ոչ սրբեսցի: այր շատերդումն լցցի անօրէնութեամբ, և ոչ ի բացեայ լիցին ի տանէ նորա հարուածը...: Եւ եթէ վայրապար ինչ երզուաւ՝ ոչ արդարասցի: զի լցցի տանջանօք տուն նորա» (ԻԳ, 11-14): Եւ ցոյց կու տայ՝ մեր Մանդակունւոյն ի տես այնպիսեաց զգացած քստմունքը՝ երբ կ'ըսէ. «Խօսք շատերդմանց ծառ կացուցանէ զհերս» (ԻԷ, 15):

Հարկաւ նոյնպէս պիտի խորհէր յոյն ողջամիտ իմաստասէրն ալ, առանց կարօտելու հրէական թելադրութեան: Պղատուն կը զզուշացնէր երդմնեցնիլ դատեալները, որ մի՛ գուցէ ստերդմութեան մէջ ընկնէին. և Աստուծոյ դէմ անարգութիւն կը համարեր անդէպ երդումը (ՅՊՂ, օր. ԺԲ, 948): — Հնդկաց օրէնսգիրը Մանու, զոր ուշադրութեամբ քննած եմ, նոյն հոգին և սկզբունքն ունի. «Ողջամիտ մարդը, կ'ը-

սէ, թող բնաւ չերդնու ի զուր, կամ նոյն իսկ չնչին բանի համար, վասն զի զուր երդմնողը կորուսուած է միւս և այս աշխարհիս մէջ՝» (Ը, 111):

Գ. — Աշիրը երդման: — Երդման ընդդիմացողը եթէ որակով բարձր, բայց թուով շատ տկար էին ընդհանուր մարդկութեան մէջ, որ աւելի դիրբաւ կը հպատակէր սովորութեան քան թէ բարոյականի նըբազնին ու տեսական սկզբանց: Ուստի և երդման սովորոյթն աւելի զօրատր հանդիսացաւ միշտ, և այդու իբր օրինաւոր ալ ընդունուեցաւ ամէն ազգերէ: Եթէ քրիստոնէութիւնը չափով կը գործածէր զայն, ուրիշ կրօնից մէջ ընդ հակառակն շատ աւելի ընդարձակ էր անոր սահմանը: Հետեւաբար շատ երզունք՝ որ մեր քով անպատեհ և անկանոն էին, այլոց համար օրինական կը համարուէին:

1. — Կեկեղապարտրեան մէջ. — Հրէից քով ամենէն աւելի յաճախեալ էին երզմունք, սկսեալ նահապետաց օրերէն: Աբրահամ երդմնեցոյց իւր ծառայն՝ երթալ կին բերել իսահակայ իւր ճազականներէն (Կննդ, ԻԲ, 2-9): Եսաւ երզմամբ փոխանակեց անդրանկութիւնն Յակոբայ ու պնաթանին հետ (անդ, ԻԵ, 33): Յակոբ երզում պահանջեց Յովսեփէն՝ քանանացւոց երկրին մէջ թաղել զինք (անդ, ԻԷ, 29-31): Յովսեփ երզմամբ խոստում առաւ իւր ստամէն՝ իրենց հետ Եգիպտոսէն հանել իւր ոսկերտտին ալ (անդ, 29): Աբրահամ երդմնեցոյց զՄիքիտ մարգարէ՝ անկեղծութեամբ պատմել Աստուծոյ հրամանը (Գ թագ. ԻԲ, 16): Միքայի մայրն համոզելու համար որդին՝ թէ անորմէ ստացած դրամը պահած է, երզումն ըրաւ (Դատ. ԺԷ, 2): Սաւուզ վճուկ կնոջ երզուաւ՝ որ ոչ մի վնաս չպիտի հասներ իրեն՝ կոչելուն համար Սամուելի հոգին (Ա թագ. ԻԸ, 10): Արենների մահուան վրայ Դաւիթ երզուաւ մինչև երկոյ չճաշակել (Ի թագ. Ի, 35): Նոյն ինքն եր-

1. Pauthier, Les Livres sacrés de l'Orient, 331.

դում տուաւ Բերսարէի՝ թէ անոր որդին Սողոմոն պիտի յաջորդէր իրեն (Պ. Թագ. Ա, 29)։ Աղոնիայի խնդրանաց վրայ՝ կին առնելու զԱրիսակ, եղբայրը Սողոմոն երդուաւ սպաննել զայն (անդ, Բ, 23)։ Ահռեկիսա երդմամբ խոստացաւ Երեմիայի՝ չսպաննել զայն (Երմ, 16)։ Եւ Հերովդէս՝ տալ իւր պարանցիկ եղբորդստեր ինչ որ ուզէ (Մտթ. ծր, 7—9)։ Միով բանիւ՝ անոնց թէ կարելոր է թէ ամենէն աննշան գործոց մէջ ալ անպակաս է երդումը, գրեթէ ինչպէս մեր քով։

Սոյնպիսի առիթներ աւելի սակաւ, բայց ծանօթ են ուրիշ ազգաց մէջ ալ։ Ձոր օրինակ՝ Հնովայիցիք աշխարհագրին մէջ երդմամբ կը հաստատէին իրենց յօժարակամ ամուսնութիւնն իրենց կանանց հետ, և սեպհական ստացուածոց արժողութիւնը (Գարեմբ. Գ, 771)։ Ժառանգները երդում կու տային իրենց հարց կամքը գործադրելու ճշդով (անդ, 772)։ Երդման կը դիմէին նաեւ երբ կը խոստանային բան մը նուիրել, կամ չվաճառել ուրիշը, և կամ երբ վաճառում մը կ'ընէին (անդ, 771)։ — Յոյներն ալ մի և նոյն սովորոյթներն ունէին. երդումը կը մտներ և անոնց ժառանգութեանց բաժանման մէջ, փոխատուութեանց ու վարձակալութեանց մուրհակաց, առեւտրական պայմանագրութեանց, և հանրային շինուածական յանձնառութեանց մէջ։ Նոյն իսկ սովորական վաճառորդներ երդմամբ կը իրարէին գնորդները, որոց դէմ Պղատոն այնքան կը սրտմտէր, որ կ'ուզէր պատժով չափ խափանել երդումը գործառնութեանց մէջ (անդ, 767—768)։ Կատարեալ նմանութիւն մեր Ե դարու վաճառականաց (աստ, 50), որոցմէ կային Շնորհաւալոյն օրով ալ, « սուտ երդմամբ զուսմիկան և զօգէտան խարելով » (Ընդհ. 201)։ Ինչպէս և Տաթևացոյն ժամանակ, « սովորեալ հանապազ կոչէ զանունն Աստուծոյ ի վերայ ամենայն սուտ բանի. ի յառ, ի տուր, ի գինեվաճառ, ի չափ, ի կշիռ, և յայլն ամենայն » (Քրդ. ձմր. 16)։

Մահուի օրեկըր՝ որ կը չափաւորէ երդման առիթները, չար չի համարիր զայն՝ երբ կատարուի ամուսնութեան խնդրուած աղջկան մը հետ, զոհելի կովի մը անուցման և նոյն նպատակաւ այրելի նիւթոց, կամ բրահմանի մ'ազատութեան համար (Ը, 112)։ — Ղարաբը՝, զոր նոյնպէս առանձին քննութեան նիւթ ըրի, կ'աւանդէ իւր ժամանակի ոչ մահմետական Արաբաց համար՝ թէ « կ'երդնուն յանուն Աստուծոյ՝ թէ այն ինչ բանը չեն ըսած » (Թ, 75)։ Իբր թեթեւ է անպատեհ երդումն։

2. — Գատուստանի մէջ։ — Ինչպէս մեր, բոլոր ազգերն ալ սովորութիւն ըրած էին երդնուլ ատենի մէջ։ Մովսիսական օրեկըր սահմանած է՝ թէ ո՛ր պարագային կը լինէր Հրէից քով. երբ ականատես չկար ամբաստանութեան, ինչպէս տեսանք արդէն մեր մէջ ալ (աստ, 52)։ Այսպէս երբ մէկը դրամ, կարասի կամ անասուն մը կը յանձնէր իւր ընկերոջ ի պահեստ, և որ և է արկածով կորսուէր, « և ոչ ոք գիտացէ », աւանդատուն երդմամբ պիտի հաստատէր իւր անմեղութիւնը (Ելք, ԻԲ, 7—11)։ Նմանապէս երբ այր մը կասկածէր իւր կնոջ հաւատարմութեան վրայ, « և վկայ ոչ գուցէ գնմանէ », անիծից երդման կ'ենթարկէին զայն (Թիւբ, Ե, 11—31)։ — Նոյնպէս էր Հնովայիցոց մէջ ալ. ամէն դատաստանական վէճ երդմամբ կ'աւարտէր. Նոյն իսկ վիճող կողմանք դեռ դատարան չգնացած, կարող էին երդմամբ լուծել խնդիրը և խնայել լինելի ծախսերը (Գարեմբ. Գ, 773)։ — Մահուի օրեկըր նմանապէս երդում կը սահմանէ երբ « վկայք չկան », որով « դատաւորք չէ կարող կատարելապէս ճանչնալ » թէ երկու հակառակորդ կողմերէն ո՛ւմ է ճշմարտութիւնը » (Ը, 109)։ — Վերջապէս նոյն հիմն է և Ղարաբնի մէջ. « Անոնք, կ'ըսէ, որ կ'ամբաստանեն իրենց կանայքը, և իրենցմէ գատ վկայ չունին, չորս անգամ պիտի երդնուն Աստուծոյ առջև » թէ ճշմարիտ

1, Panthier, վերոյիշեալ հաւաստոյն մէջ, 539,

կ'ըսեն», և հինգերորդին պիտի տան ա. նիծից երդումը (ԻԿ, 6, 7): Բայց կինը պատժէ կ'ազատէ՝ եթէ նոյնչափ և նոյն ձեւով ինքն ալ երդնու՝ թէ ամուսինը կը ստէ (անդ, 8, 9). վասն զի ասով անորոշ վիճակ մը կը զոյանար:

3. — Կըսեցի համարս — Հրէից մէջ շատ յաճախ կը պատահինք՝ աստուածային օրինաց պահպանութեան համար տըրուած երդմանց Դաւիթ կ'ըսէ Սաղմոսաց մէջ. «Երդուայ և հաստատեցի՛ զի պահեցից զամենայն իրաւունս արգարութեան քո» (ձԺԸ, 106). Թէ երբ՝ յայտնի չէ: Ասա թագաւորն երդում պահանջեց Յուդայի և Բենիամինի ցեղերէն՝ հաւատարմաբար ծառայելու Աստուծոյ և սպաննելու ով որ զտոննաբ առ Աստուած (Թ Մնաց. ԺԵ, 12-15): Նոյն ուխտը կատարեցին Հրեայք Նեեմիայ օրով ալ (Թ-Ժ), Բենիամինի ցեղն ոճիր մը զործեց յանձին զևտացոյ մը հարձին. Խարայեացիք միացան՝ կոտորեցին անոցմէ շատեր, և երդուան հարս չտալ անոնց այնուհետեւ (Դաս. ԽԱ, 1): Եղը երդմեցեցոյ Հրէից իշխաններէն՝ արձակել իրենց այլազգի կանայքը, զոր ասած էին հակառակ օրինաց (Ա Եղը. Ը, 97): Նեեմի եւս երդում պահանջեց անոցմէ՝ ամուսնութիւն չկնքել հեթանոսաց հետ (ԺԿ, 25), և Հրէից կալուածները փրկանաւորել անոցմէ (Ե, 12):

— Յունաց մէջ երբ պատանին չափահաս կը լինէր, կ'երդնուր շանպատուել իւր զէնքերը, չըթանել պատերազմակցը, կտուել իւր աստուածոց ու տան, և հարկենեաց մեծութեան համար, և մեծարել հարց կրօնըը (Դարեմբ. Բ, 624-5): — Ո՛չ ապաքէն այս բոլորը կը յիշեցնեն Վարդանանց ու Վահանեանց երդումները (աստ, 52-53):

4. — Դաշանց մէջ: — Ազգաց կամ անհատից միջև երդմամբ կնքուած համաձայնութիւնը շատ յաճախեալ էին ինչպէս մեր (աստ 53-54), նոյնպէս ուրիշ ազգաց քով ալ: Հրէից նահապետն Աբրահամ և Գերարայի թագաւորն Աբրամէլէք՝ խաղաղութեան երդում տուին իրարու

(Մնդ. ԽԱ, 23). նոյնպէս ըրին Խահակ և նոյն Աբրամէլէք (անդ, ԻԶ, 30), և Նաքովր ու Յակոբ (անդ, ԼԱ, 51-54): Յետուայ օրով Հրէից իշխանը զարաւունացոց երդուան չկոտորել զանոնք (Յես. Թ, 15): Յոֆնաթան ու Դաւիթ յաւերժական հաւատարմութիւն երդուան իրարու (Ա Թագ. Ի, 42): Եւ Նաբուքոդոնոսոր թագաւորեցնելով զՍիեղեկին՝ հաւատարմական երդումն ատաւ անորմէ (Թ Մնաց. ԼԶ, 13): — Յոյն պետութիւնը Տրոյից վրայ երթալու ժամանակ երդմամբ ուխտեցին իրարու չզառնալ՝ մինչև որ զայն չկործանեն (Իլլիակ. Բ. 286-8, 339): Ամփիկափոնեան կամ Ելլաբական ատենի անդամք ժողովի չմտած՝ կ'երդնուին չփնասել իրենց պաշտօնակցաց, իրենց քաղաքաց փնասողաց դէմ պատերազմել, վրէժ խնդրել Դեդփիսի մահներէն կոողպտողներէն (Ռուլէն, Հնախ. Բ, 574): Եւ վերջապէս հելլենաց բոլոր դաշինքները սովորաբար փոխադարձ երդմամբ կ'ամրապնդէին (Դարեմբ. Բ, 1208): — Հողմայեցիք չէին զանազանիւր Յոյներէն այս մասին: Կիկերոն կը յիշատակէ «զինակցութիւնըն ու դաշինքը՝ յորում կը կապենք զմեզ երդմամբ, նոյն իսկ մեր թշնամեաց հետ» (Յզգ. Պշտ. Գ, շա). և Տիտոս Լիւիոս աղոր երդմածնեւ ալ կ'աւանդէ (Դարեմբ. Գ, 770): — Ղոպարեիկ ալ ընդունելի են « դաշնակցական երդմունք» մահմետականաց և այլակրօնից մէջ իսկ (Թ, 7-12), կոչուած նաեւ «հաւատարմութեան երդումն», զոր սուղոք Իբրեւ թէ « կը մատուցանեն Աստուծոյ » (ԽԸ, 10):

5. — Հայտարեան երդումն. — Այնչափ շատ են ասոր օրինակներն այլոց քով, որչափ մեր (աստ, 54): Հրէից մէջ Սաւուզ թշնամի և հետամուտ Դաւթի, հաւանելով Յոֆնաթանայ աղաչանաց՝ երդուաւ այլ եւս զայաննել զայն (Ա Թագ. ԺԹ, 6): Սեմէի նոյն երդումն ստացաւ Դաւթէ՝ զոր նախատած էր (Թ Թագ. ԺԹ, 23): Սաւուզ պահանջեց Դաւթէ երդում խնայելու իւր տան՝ երբ թագաւորէ (Ա Թագ. ԻԿ, 22): Յետ պատերազմի մը՝

պարտեալ այլազգիք երդուան Դաւթի այլ եւս գէնք չառնուլ իրարու դէմ (Բ Թագ. ԻԱ, 17)։ Հրէից իշխանք ամբարցած բերդերու մէջ, երդումն ընդունեցան Անտիոքոսէ և անոր իշխաններէն, և ապա զուրս ելան (Ա Մակ. 2, 61)։ Նոյն պայմանաւ Ոնիա եւս անձնատուր եղաւ Անդրոնիկոսի (Բ Մակ. 7, 34)։ ճիշդ մեր Հասանայ և Սմբատայ պարագայն (աստ, 111), — Յունաց մէջ ալ կը տեսնուին նոյնպիսի երդմունք թէ անհատից և թէ քաղաքական կուսակցութեանց միջեւ. Աքիլլեոս և Ագամեմոն, Ողիսեոս և իւր սպանելոց ազգականք, Հերակլէս և Նեղէոսի որդիք՝ երդմամբ հարթեցին իրենց վէճերը. Թեսէոս և Պիրիթոյոս անեղծ բարեկամութիւն երդուան իրարու (Պարեմք. Գ, 767)։ Թեսպացիք, Միտիլենացիք, Մեգարացիք և Աթենացիք՝ իրենց կուսակցական ներքին պայքարներուն վերջ տուին երդմամբ. նոյնպէս աւարտեցան դաշնակից քաղաքաց մէջ պատահածներն ալ, ինչպէս Աթենացոց ու Քադկիդացոց, Մագնիսացոց և Չմիւռնացոց մէջ, և այլն (անդ, 753-754)։

6. — Հպատակութեան երդումներ։ — Կրնանք բաժնել զանոնք երեք դասակարգի։ ա, Հպատակաց առ իշխանս տուածը։ Տեսանք մեր Բագրատունեաց ընդունած երդումն իրենց օժման ժամանակ. և ըսի թէ Արշակունեացն անյայտ է (աստ, 55)։ Փաւստոս կը պատմէ՝ թէ ուրացողն Մերուսան յարիւով Շապհոյ, «դէնք ընդ նմա ուխտ երդմամբ՝ զի յախտեան ծառայ լիցի նմա» (Գ, իգ)։ Արդեօք մեր նախարարք նոյնպէս չէին ընէր իրենց ընդ թագաւորին ալ. — թէեւ Փաւստոս նոյնը չաւանդէ Շապհոյ յարող միւս հայ իշխանաց մասին եւս (Գ, ժ)։ — Բայց զոնէ Պարսից սովորութեան համար բաւական ապացոյց է այդ։ Նոյնը ծանօթ է ուրիշ հին ազգաց մէջ ալ։ — Հրէից թագաւորաց արուածը կը յիշէ Ժողովուրդ (Ը, 2)։ Յովիդայէ քահանայն երդնուլ տուաւ ժողովրդրդեան՝ Բովաս արքային (Գ Թագ. ԺԱ, 4)։ Նոյնպէս վարուեցան նաեւ Գոթոդիայ հետ, երբ իշխան կարգեցաւ Բարեւացոց

կողմանէ (անդ, ԻԵ, 24)։ — Յունաց հին բռնաւորք կամ թագաւորք ալ հնազանդութեան երդում կ'ընդունէին իրենց հըպատակներէն։ Սպարտացոց զինուորք նոյնը կու տային իրենց թագաւորին. և աթենացի զինուորք՝ Երեսուն իշխանաց (Պարեմք. Գ, 754)։ — Հռովմայեցոց քով եւս կը յիշուի նոյնը. սամիթացի զինուորք կ'երդնուին պատերազմի երթալ ուր և տանին զօրագլուխք. չփախչիլ անկից, և փախտողան ընկերն սպաննել (Ռուլէն, Պտմ. Հոմ. Բ, 93)։ — Ղարաբեկ ալ մի և նոյնը կը հաստատէ, ըսելով մարգարէին. «Անոնք (հաւատացեալք) երդուան յանուն Աստուծոյ՝ երդմանց ամենէն մեծաշուքը, որ եթէ զու հրամայես իրենց դիմել ի մարտ՝ պիտի ընեն»։ Թէ և այս բանիս համար երդումն աւելորդ կը համարի (ԻԿ, 53)։ — Այս զինուորական երդման համեմատութիւնն եւս կատարեալ է մեր և օտարաց մէջ. հայ զինուորք ալ հնազանդութեան երդումն կու տային մեր իշխանաց՝ ըստ Շնորհաւաւոյն, որ կը յորդորէ զանոնք չզնջածանիլ իրենց իշխանութեամբ և երդմանազանցութեան պատճառ չտալ անոնց (Լինգ. 191-192)։

բ. Տեսանք մեր Ռուբինեանց երդումն՝ օրինաց պահպանութեան վրայ (աստ, 55)։ Լաւ, ազոր օրինակները կան նաեւ Յունաց քով։ Աթենացի ատենակալք կ'երդնուին վարիլ ըստ օրինաց, պաշտպանել ժողովրդեան իրաւունքները, մերժել իրենց տրուած պարգեւները, անաչտութեամբ դատել։ Աթենացոց ժողովոյն՝ անդամք նոյնպէս երդում կու տային իրենց պարտուց հաւատարիմ կատարման համար (Պարեմք. Գ, 755-6)։ Ոչ միայն իշխանաւորք, այլ բոլոր աթենացի զինուորք և քաղաքացիք եւս պիտական օրինաց պահպանութեան վրայ կ'երդնուին (նոյն, Գ, 753)։ Նմանապէս չափահասութեան մտնող ամէն յոյն երդումիւր կը խոստանար ի մէջ այլոց՝ հպատակիլ դատաւորաց, ժողովրդրդեան սահմանած ու սահմանելի օրինաց (նոյն, Բ, 625)։ — Հռովմայեցոց մէջ նոյնը կը տեսնենք. ատենակալք պարտաւոր էին

իրենց ընտրութեան առթիւ հաւատարմութիւն երդնուլ օրինաց, իսկ միապետութեան օրով՝ կայսեր վճռոց (Պարեմբ. Գ, 770, 771)։ Նոյն երդումը կու տային և հիւպատոսք<sup>1</sup>, համարակալը. ծերակուտականք՝ երբ խնդրոյ մը համար քուէարկութիւն պիտի լինէր (անդ, 771)։ զատաւորք ամէն զատի սկիզբը կ'երզնուին ճշմարտութիւնը փնտռել և յարգել օրէնքը (անդ, 775)։ — Այս գաղափարն ու ձևը, այս ինքն գերագոյն իշխանութիւն համարել օրէնքը և անոր երդնուլ, քաղաքակիրթ ազգաց միայն յատուկ էր, ինչպէս կը տեսնենք։

գ. Պայմանական կամ փոխադարձ երդում մ'ալ կար Յունաց մէջ, որ արդիւնք էր իշխանութեան պաւագոյն ըմբռնողութեան, և ապահովութիւն հասարակաց իրաւանց։ Մինչդեռ սպարաոսցի թագաւորք կ'երդնուին կառավարել ըստ կարգեալ օրինաց, քաղաքն ալ երդում կու տար հաստատուն պահել թագաւորութիւնը՝ ցորչափ իշխեցողը հաւատարիմ մնան իրենց ուխտին։ Նոյնպէս կ'ընէին Եպիւրոսի թագաւորք, Աթենայ արքանոց և այլք (անդ, 754)։ Պերգամոսի թագաւորք ևս ընդու նելով զօրաց հպատակութեան երդումը, ապա և իրենք կ'երդնուին իրենց պարտաւորութեանց վրայ (անդ)։ — Եթէ լսենք Պարզելի, մինչդեռ մեր Ռուսիեանք կ'երդնուին օրինաց վրայ, ժողովուրդն ալ կը շարունակէր արքային երդնուլ, որ սակայն կրնայ սովորական չլինել, ըստ որում չէ յիշուած թագաւորոհնէից մէջ. այսպէս Լեոն Ե հագիւ ընտրուած, Հայք «կամէին առժամայն տալ նմա և ուխտս հաւատարմութեան» (2Գ). և որ յետաժրգուելով՝ տուին ապա Սոյ պաշարման պահուն, — եթէ սա երկրորդ դիպուած մը չէր, — երդնով «լինել բարի և հաւատարիմ», և ըրիստոնէարար ապրիւ, ինչ որ նախ թագաւորն ուխտեց և ապա ազգը (անդ, 2Գ)։

Գ. — Երդմտոյր։ — 1. Տեսանք՝ թէ այլազան կրօնից պատկանողք իրարու երդում կու տային իւրաքանչիւրն իւր կրօնից համեմատ (աստ, 55)։ Նոյն էր նաև Հրէից համար ալ, որոց արգելուած էր երդնուլ ուրիշ աստուածոց վրայ՝ բաց ի Նեովայէն, ինչպէս պիտի տեսնենք յետոյ. հակառակ պարագային կռակաշտ կը համարուէին։ Այսպէս Նաբուքոդոնոսոր ըզՍեղեկիա երդմեցուց «յաւտուած իւր», ոչ եթէ Բաբելոնի կոտց վրայ (Բ Մնաց. 12, 13)։

2. Հասակի խնդրին Յունաց մէջ կը գտնուանէր. Միւ. Գոշի անպայման արգելքը տղայոց մասին (աստ, 56) մեղմ էր անոնց մէջ, որոց տղայք կրնային երդնուլ երբ շահու վերաբերեալ էր վէճը (Պարեմբ. Գ, 773)։ — Աւելի բարդ էր սեռի խնդիրը։ Յունաց բով կանայք ճիշդ տղայոց դիրքն ունէին (անդ). միայն քանի մ'առթից մէջ կարող էին երդնուլ. իսկ անոցմէ դուրս պարտաւոր էին անոնց փոխան երդում տալ իրենց ամուսինք (անդ, 766)։ Հրէուհիք կ'երդնուին երբ կասկած ծագէր իրենց հաւատարմութեան վրայ, ինչպէս վերև ալ տեսանք։ Նոյնպէս երբ ուզէին տրամադրել ընչից վրայ, պայմանաւ որ իրենց հարց կամ ամուսինք հաւան լինէին. հակառակ պարագային երդումը չէր զօրեր. մինչդեռ անջրելի էր այն՝ երբ երդմտոյն այրի էր կամ արձակուած (Ելք, 1, 4-16)։ Հետեւորար հայ կանանց երդմեալու իրաւունքն աւելի ընշարժակ էր (աստ, 56)։ — Վիճակն ալ երբեմն խարականութեան պատճառ էր. ի Հոովմ՝ Արամազդայ քրմապետին արգելուած էր երդնուլ. անոր համար իւր կողմէն ուրիշ մը պիտի ընէր նոյնը՝ եթէ հարկ լինէր (Պարեմբ. Գ, 770)։ Այս կրօնից պաշտօնէին, ինչպէս և երդմեալու անյարմար Հիւնուհեաց արգելքն ու փոխանակութիւնն՝ ո՛չ ապաքէն նախանկար օրինակն է մեր մէջ տեսնուած համանման օրինաց (աստ, 56)։

3. Գալով զատաստանին, Յոյնք կ'երդմեցնէին մերթ վիճող կողմանց մին միայն,

1. Darsy, Dict. gén. de Biogr... - Serment.

և մերթ երկուքն ալ, բայց աւելի յաճախ՝ ամբաստանեալը, և այս զանազանութիւնը կախումն ունէր երզնմողին նոյն խնդրոյն մէջ ունեցած հանգամանքէն (Գարեմբ. Գ, 763), ոչ եթէ թողուելով լուկ դատախազին կամ առաւել ճշմարտախօսին, ինչպէս էր մեր մէջ (աստ, 56): — Հոռովմայեցիք ի սկզբան կ'երզնեցնէին ամբաստանեալը, որ սակայն կարող էր նոյն գործը թողուլ և շարախօսին (նոյն, Գ, 773): Իսկ դատաստանական կազմակերպութենէն վերջ երզումն ազատ էր, և ինչ ինչ երկրորդական խնդրոց մէջ կը թողուէր մէկ կամ միւս կողման, մինչդեռ դրամական և այլ կարեւոր խնդրոց մէջ ստիպողական էր և յատուկ ամբաստանելոյն (անդ, 774-5): — Մոզմիսական օրէնքը կ'երզնեցնէր անհատատարմութեամբ ամբաստանեալ կինն իսկ. և Ղուբանին համեմատ՝ նախ դատախազ այլը կ'երզնուր, ապա կինը, ինչպէս տեսանք վերեւ: — Հին գերման օրէնքը կու տար երզումը գլխաւորապէս ամբաստանելոյն, պաշտպանելու համար իւր անձը: կը միջամտէին անոր ազգականներէն ազատ և անսոցիւտ ծանուցուած մարդիկ եւս, որոնք երզմամբ կը հաստատէին անոր երզման ճշմարտութիւնը, և կը կոչուէին երզմակիրք (Գոռլ. ԻԲ, 27): Այս պարագայն անծանօթ է մեր և այլոց ջով: — Վերջապէս կար վկայից երզումն ալ, յիշուած Հրէից մէջ միայն՝ իբրեւ սովորական բան մը (Ղեւտ. Ե, 1. Առակք, ԻԹ, 24), մինչդեռ անծանօթ է ուրիշ ազգաց. թէեւ գերմանական երզմակցութիւնը կարենայ նոյնանալ ասոր հետ:

Ե. — Տեղիք երզման: — 1. Տեսանք մեր մէջ իբրեւ առաջին վայր դատաստանական երզման՝ եկեղեցից (աստ, 56): Նոյնն ուրիշ քրիստոնէից ալ սեպհական կ'երեւի. գոնէ Գերմանացիք Ը դարուն արդէն օրինապէս հետեւող են սոյն սովորութեան (Գոռլ. անդ): — Սակայն ասոր ծագումն աւելի հին է, Աւետարանէն ալ հին: Մոզմիսական օրինաց համեմատ ինչ ինչ երզումն կը տրուէին «վկայութեան խորանին» մէջ, որ էր ժամանակի սրբա-

վայրը, ինչպէս կասկածելի կանանց երզումը (Թիւք, Ե, 15-17): Նոյնպէս՝ ստացուած աւանդը գորցնողը պիտի երթար «առաջի Աստուծոյ» երզուող իւր անմեղութեան համար (ԵԼԶ, ԻԲ, 8): Յետոյ Երուսաղեմի մէջ տաճարին դրան առջև կը դատէին, ուստի հարկաւ հոն ալ կ'երզնեցնէին յանցաւորները (Երեմ. ԻԶ, 10-11): Եւ Յովիդայէ տաճարին մէջ երզմեցուցուց շրջայքը հնազանդել Յովասայ (Գլխագ. ԺԱ, 4), ինչպէս Հայք կ'ուխտէին իրենց Թագաւորին (աստ, 57): — Ինձ այնպէս կը թուի՝ թէ քրիստոնէութիւնն ու հրէութիւնն այդ սովորութիւնը հեթանոսութենէ առին, որոց ջով ալ համեմատաբար հնագոյն դարուց՝ նոր էր այն՝. և որոնք կ'երզնուին մեհենաց մէջ կամ բազնաց վրայ: Մեզմէ իսկ սկսինք քննել: Տակիտոս կը պատմէ՝ թէ մեզ դրացի և յաճախ իշխեցող Պարթեւք երզում կու տային «ի վերայ դիցն բազնաց» (ԺԱ, Բ): Նկատելով անոնց ու մեր մերձաւորութիւնը սահմանակցութեամբ, ազգականութեամբ և «նմանակցութեամբ բարուց», զոր կը շեշտէ նոյն պատմիչը (ԺԳ, յԵ), անտեղի չպիտի լինի հետեւցնել՝ թէ Հայք ալ լուսաւորչէն յառաջ նոյնպէս կ'երզնուին: — Նոյնը կը տեսնենք ուրիշ ազգաց մէջ ալ. ո՞վ չգիտէ Աննիբաղայ Հոռովմայեցուց դէմ հանրածանօթ երզումը, կանգնած բազնին առջև և ձեռնը դրած զոհին վրայ: Չափահաս Հելլէնք կ'երզնուին Ակրոպոլի կողին զետեղուած Ալլաւրի տաճարին մէջ (Գարեմբ. Բ, 624): և քրմուհիք՝ Ապողոնի մեհենին մէջ (անդ, Գ, 758): Նոյնպէս յԱյնոս կայուածոց գնման երզումն կը կատարուէին սեղանին առջև (անդ, 768): — Սամիտացիք կ'երզնեցնէին իրենց գիւնուորները սեղանոց ջով, որոց վրայ տեսնուին կային (Ռոլէն, Պտմ. Հո. Բ, 93): Եւնէականին մէջ Մնէաս ու Լատինոս կ'երզնուն նոյնպէս բազնի մը ջով (ԺԲ, 176), որոյ մէջ կը տեսնենք հոռովմէական սո-

1. Dict. des Moeurs. - Serment. - Nuova Enciclopedia. - Giuramento.

վորութիւնը՝ երդմնելու աստնին կամ որ և է աստուծոյ մը սեղանին վրայ (Գարեմբ. Գ, 771): Եւ Հոովմայիցի նորընտիր հիւսպատոսը իրենց երդումը կու տային կապիտոլիան Արամազդայ տաճարին հանդէպ (Գարեմբ, բար. 2606): — Վերջապէս Ղուրանն ալ երդման ընտրելագոյն տեղին կը համարի «սուրբ աղօթարանին մօտ», որով աւելի հաստատուն կը լինէր (Թ, 7):

2. Մեր միւս երդմնավայրն էր ատեանը (աստ, 57): Բայց այդ միայն մերը չէր. երբ Հրէից դատաստանը կը կատարուէին սովորաբար քաղաքաց զրանց առջեւ՝ անոնց ընդարձակութեան համար, և թագաւորը կը դատէր իւր պալատան զաւթին մէջ (Գ Թագ. Է, 7): Կը հետեւի թէ նոյն վայրերու մէջ ալ կ'ընդունէին երդումը: — Գերմանացիք նախ քան իրենց քրիստոնէութիւնը կ'երդմնեցնէին մահապարտութեան հրապարակին մէջ (Գող. ԽԳ, 27):

3. Կենցաղավարութեան սովորական պատահարներուն ինչպէս մեր հարցը (աստ, 57), ուրիշ ազգիւն ալ կը հարկադրէին երդում տալ յաճախ և առանց խտրութեան տեղւոյ: Եսկոք նահապետ Նաքովըայ երդումը լեւան մը վրայ (Մինդ. ԼԱ, 54): Հրէից աստնին կամ ընկերական կենաց մէջ այն շատ յաճախ պատահած երդումները՝ զորս տեսանք վերեւ, բնականապէս կը տրուէին ուր որ հանդիպէր: Սաւուղ երդուաւ կախարդին տան մէջ (Ա Թագ. ԻԲ, 10): Դաւիթ և Թովմայթան՝ անդի մը մէջ (Ա Թագ. Ի, 42): դարձեալ Դաւիթ՝ իւր ապարանցի մէջ (Գ Թագ. Ա, 29): Հրեայք Նեեմեայ օրով՝ «ի քարձրաւանդակ տեղուղ» (Նեեմ. Թ, 3), և այլն: — Նոյն զանազանութիւնը կը տեսնենք և Յունաց քով: Դյոտն, Ազամննոն և Աքիլիսս կ'երդնուն իրենց բանակին մէջ (Իլլիակ՝ Ժ, 329. ԺԹ, 258. ԽԳ, 43): Ատրիդէս՝ դաշտի մը մէջ (անդ, Գ, 276): արայիցիք՝ ծովափին վրայ (անդ, Բ, 333), և այլն:

ուր չկան ոչ տաճարք, ոչ բազիլիք: — Վերջապէս կը համաձայնի այլոց հետ հոովմէական սովորոյթն ալ: Վիքրգիլիոս երդնուլ կու տայ Յուլիոս՝ պատնիշի մը մէջ և զաշտավայրի (Են. Թ, 280): Ատենակալը կ'երդնուն հրապարակային բեմի մը վրայ (Գարեմբ. Գ, 770), և այլն:

Հ. ՎԱՐՄԱՆ ՀԱՅՈՒՆ

Շարայարելի

## ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍԲ

### ՀԱՅ-ԲՈՇԱՆԵՐՈՒ ԼԵԶՈՒԻՆ ՎՐԱՅ

Հանգուցեալ Պրոֆ. Գ. Պ. Պատկանեան՝ 1887ին Պետրբուրգի մէջ հրատարակեց տեսարակ մը հետեւեալ տիտղոսով. Цыганы, ꙗсколькѡ словѣ о нарѣчїяхъ закавказскихъ цыганъ, որ թարգմանուելով անգլիերէն՝ տպուեցաւ Journal of the Gypsy Lore Society (Նոր շար, Հտ. 1, թ. 3. — Հտ. 2, թ. 3 և 4) ուսումնասիրութիւն մէջ:

Հեղինակը մէջ կը բերէ համառօտիւ ինդոսի վիճակը: Առաջին անգամ Հ. Ն. Սարգիսեանի, (Տեղագրութիւն Ի Փոքր և Ի Մեծ Հայս. Վեներիկ, 1864) հրատարակութեան մէջ կը հանդիպինք մենք հայ-թոշաներու լեզուին յիշատակութեան, որ աւելի կամ պակաս խանգարուած ձևի ներքեւ՝ միայն 89 բառերու ցանկ մը կը ներկայացընէ: Իսկ Ա. Պասպատի Իստամբուլի բուշաներու վրայ (Etudes sur les Tchinghianés. Կ. Պոլիս, 1870) հրատարակութիւնը կը յիշէ միայն Եւրոպիոյ հայ-թոշաները:

Պատկանեան կ'ընծայէ մեզի 46 նախադասութիւններ և 238 բառեր, հանդերձ կարճաբան ցերականական ուսումնասիրութեամբ մը: Այս նիւթերն ընդունած էր նա E. G. Weidenbaum անունով անձէ մը, որ իւր կարգին ձեռք բերած էր գա-

1. Բ. Օր. ԻԱ, 19. — 2. Բ. Գ. 1. — Ստ. ձեռ. 5. — Աժով, Ե, 10, 12, 15.